

Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>>
Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի
60-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 11-րդ և 12-րդ կետերով՝ հետևյալ
բովանդակությամբ.

<<11) պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային և
կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողներին ու ռազմաուսումնական
կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող
կուրսանտներին և սովորողներին՝ որպես դրամական ապահովություն.

12) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության
կողմից նշված վայրում և պայմաններում պարտադիր զինվորական
ծառայություն անցած զինծառայողներին՝ որպես պատվովճար:>>:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պարտադիր զինվորական
ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի
զինծառայողներին ու ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական
հաստատություններում սովորող կուրսանտներին և սովորողներին վճարվող
դրամական ապահովության գումարների վրա կատարողական թերթով կամ
օրենքով սահմանված այլ հիմքով բռնագանձումներ չեն կարող կիրառվել:

ՀՈՂՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը: